Արձանագրություն N 1

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2017թ. հունվարի 18-ի նիստի
(ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5)

Ներկա էին՝
Խորհրդի նախագահ՝ Սուրեն Կարայանը:
Խորհրդի անդամներ՝ Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Աբգար Մկրտչյանը և Մարիամ Այվազյանը:
Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Տարոն Հակոբյանը, Ալիսա Երանոսյանը, Արարատ Սարգսյանը և Վլադիմիր Թամրազյանը:
Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգ

Օրակարգի հաստատման ժամանակ առաջարկություն կատարվեց օրակարգը հաստատել է լրացնել ՝
1. Որակի ապահովման բաժնի աշխատակիցների պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին /Ա. Սարգսյան/
2. Արթուր Մկրտրչյանին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ներկայացնելու մասին / Լ.Խալիկյան/ կետերով:

Լսեցին՝

1. Տեսչական մարմնի 2017թ. բյուջեի նախահաշվի հաստատում:

Զեկուցող՝ Լևոն Խալիկյան
Արտահայտվեցին՝ Ս. Կարայանը, Կ.Միրզաբեկյանը:
Որոշվեց՝ հաստատել տեսչական մարմնի 2017թվականի բյուջեի նախահաշիվը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

2. Տեսչական մարմնի 2016թ. հաշվետվությունը:
   Զեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին՝ Հ.Այվազյանը, Ա. Գևորգյանը, Կ.Միրզաբեկյանը:
Առաջարկվեց՝ հավանություն տալ 2016թ. հաշվետվությանը:

Որոշվեց՝ հավանություն տալ Տեսչական մարմնի 2016թ. հաշվետվությանը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

3 Ստուգումների իրականացմանը խոչընդոտող օրենսդրական դաշտի բացերի կարգավորման մասին:
Զեկուցող՝ Լևոն Խալիկյան
Արտահայտվեցին՝ Ս.Կարայանը, Հ.Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Լ.Խալիկյանը:
Առաջարկվեց՝ Տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյանին տալ հանձնարարական՝ 20 օրյա ժամկետում ՀՀ արդարադատության նախարարության, Տեսչական բարեփոխումների խմբի հետ համատեղ կազմել աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու տեսչական ստուգումներ իրականացնելու ընթացքում կազմված ակտի հիման վրա Տեսչական մարմինն իրավասու է կիրառելու պատասխանատվության միջոցներ (կասեցում, արգելում կամ տուգանք), եթե այո, ապա ներկայացնել դրանց իրավական հիմքերը և զեկուցել կառավարման խորհրդի նախագահին:
Որոշվեց՝ ընդունել ի գիտություն:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

4. Արթուր Մկրտչյանին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ներկայացնելու մասին:
Զեկուցող՝ Զեկուցող՝ Լևոն Խալիկյան
Արտահայտվեցին՝ Ս. Կարայանը, Կ.Միրզաբեկյանը, Ա.Գևորգյանը, Լ.Խալիկյանը,:
Առաջարկվեց՝ հավանություն տալ Արթուր Մկրտչյանին ՀՀ տետեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու համար:
Որոշվեց՝ հավանություն տալ Արթուր Մկրտչյանի թեկնածությանը՝ ՀՀ տետեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ վարչապետի հաստատմանը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

5 Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2016թ. հաշվետվությունը:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան
Արտահայտվեցին՝ Կ.Միրզաբեկյանը, Հ. Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Լ.Խալիկյանը:
Առաջարկվեց՝ հանձնարարել ՀՀ տետեսական զարգացման և ներդրումների նախարարի օգնական է.Գրիգորյանին հնարավորինս սեղմ ժամկետներում կայքի սպասարկման հետ կապված մասնագետի հարցի կարգավորումը:
Որոշվեց՝ հավանություն տալ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2016թ. հաշվետվությանը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

6. Որակի ապահովման բաժնի գործունեության 2017 թ. տարեկան ծրագրի նախագծի հաստատում:
Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան
Արտահայտվեցին՝ Կ.Միրզաբեկյանը, Հ. Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Կ.Սահակյանը:
Առաջարկվեց՝ Որակի ապահովման բաժնի գործունեության հաշվետվությունները կառավարման խորհրդին ներկայացնել կիսամյակային կտրվածքով:
Որոշվեց՝ հաստատել Որակի ապահովման բաժնի գործունեության 2017 թ. տարեկան ծրագիրը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝

7. Որակի ապահովման բաժնի աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու մասին:
Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան
Արտահայտվեցին՝ Կ.Միրզաբեկյանը, Հ. Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Կ.Սահակյանը:
Առաջարկվեց՝ 1. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետի պաշտոնի անձնանգրի VII գլխի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
2) ապահովում է Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Տեսչական մարմնում ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացումը,
2. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետի պաշտոնի անձնանգրի VII գլխի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել
3. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետի և գլխավոր մասնագետների պաշտոնի անձնանգրերում VII-րդ՝ իրավունքները և պարտականությունները, գլխում ավելացնել հետևյալ նոր կետերը

1) իրականացնում է Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին՝ ՀՀ 2015թ. հունիսի 25-ի N 693 Ն որոշմամբ սահմանված իրեն վերապահված գործառույթներ,
2) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:
Որակի ապահովման բաժնի աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելը ևս մեկ անգամ քննարկել բաեփոխումների խմբի հետ և եռօրյա ժամկետում ներկայացնել համաձայնեցված տարբերակը:
Որոշվեց՝ համաձայնություն տալ Որակի ապահովման բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Խորհրդի նախագահ՝ Սուրեն Կարայան

Խորհրդի անդամներ՝ Կարեն Իսախանյան

Հայկ Այվազյան

Արմեն Գևորգյան

Կարեն Սահակյան

Կարեն Միրզաբեկյան

Աբգար Մկրտչյան

Մարիամ Այվազյան